ՍԵՒԱՆԱՑ ՎԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Սևանայ վանքի նախնական պատմութիւնը միանգամայն ծածկուած է թանձր մշուշով։ Աւանդութիւնն ասում է, թէ այստեղ, բլրի գագաթին, եղել է մի մեհեան, որը կործանել է ս. Գրիգոր Լուսաւորիչը Տրդատի հետ այստեղով անցնելիս, և նրա տեղը կանգնել ս. Յարութեան տաճարը 305 թ. կղզին էլ կոչել է «Սա է վանն», որ յետոյ աղաւաղուելով դարձել է Սէվան։ Անուան մի այսպիսի անհեթեթ բացատրութիւն էլ տուել են ոմանք, վերլուծելով Սևան բառը «սև-վանն», կամ «սև-վանք»-ի, որից և յառաջացել է ռուսական կոչումը՝ Սեվանգ (Севангъ)։ Ամենահաւանական ենթադրութիւնը այս անուան ծագման վերաբերութեամբ պ. Նիկոլսկունն է, որ հանում է Օրդակլուի և Քեօլանի-ղռանի սեպաձև արձանագրութիւնների մէջ յիշատակուած «Suinia» բառից, որ վերաբերում է այս լճին և որ ուրարտերէն նշանակում է «լիճ» կամ «աւազան» *)։

Վերոյիշեալ աւանդութիւնից զատ Սևանայ վանքի կամ կղզու մասին մինչև ութերորդ դարը ոչ մի յիշատակութիւն չկայ։ Միայն 703 թուին Յովհաննէս կաթուղիկոսի ասելով, Արաբացւոց տիրապետութեան ժամանակ Մահմէտ ոստիկանը «մարտ ընդ բոլորից իսկ ամրոցաց Հայոց դնէր, և զորս միանգամ յինքն գրաւէին, առհասարակ քանդեալ աւերեալ ի վայր կործանէին։ Իսկ Սևան կղզի, որ ի ծովակին Գեղամայ, թէպէտ և յիսկզբան նուազի անդ ոչ ըմբռնեցաւ ի ձեռս նորա, սակայն զկնի երկեամ մի ամաց մատնեցաւ ի ձեռս նորա. և որ միանգամ բնակեալ կային յամրոցի անդ՝ գերի առեալ տանէր, և զկապուտ կողոպուտն յաւարի առեալ՝ սպառսպուռ քանդէր աւերէր զամրոցն»։

Այս պատմութիւնից երևում է, որ Սևանայ կղզին միաժամանակ իբր ամրոց է ծառայել. և յիրաւի, նրա երեք կողմը ուղղահայեաց ժայռերով պատած լինելով միանգամայն անմատչելի են, իսկ միակ, ցածրադիր կողմը, այն է հարաւ-արևմտեանը, պատած է եղել պարսպով, որի հիմնապատերն այժմ էլ նկատելի են լճափին։

Այս աւերածութիւնից յետոյ պատմութիւնը դարձեալ լռում է Սևանայ կղզու և վանքի վերաբերմամբ գրեթէ երկու դար շարունակ, մինչև 874 թուականը, երբ հիմնարկւում են այժմեան կանգուն եկեղեցիները Մաշտոց վարդապետի ձեռքով և Մարիամ թագուհու միջոցներով։

Մաշտոցը Եղուարդ գիւղից է եղել, ծնուած 833—4 թուին.

*) Никольскій: Клинообразныя надписи Закавказья. եր. 127.

նա ուսել է Մաքինացոց վանքում և այդ տեղի էլ միաբան դարձել, սակայն մի առ ժամանակից յետոյ գնացել է Արտաւազդայ ապարանք կոչուած աւելի խստակրօն անապատը և այստեղից 862 թ. եկել է Սևանայ կղզու հանդէպ, լճի արևմտեան ափին բարձրացող, այժմ «Մաշտոցներ» կոչուող, սարի գագաթին, մի բնական սառն աղբիւրի մօտ մի փոքրիկ մատուռ շինել և այդ տեղ ճգնել։ Ապա անցել է Սևան կղզին, որի արևելահայեաց ժայռերի մէջ, մի դժուար մատչելի տեղում այսօր էլ ցոյց է տրւում երկու քարայրեր, որոնցից մինում ճգնել է նա, և միւսում ապրել։ Այստեղ հետզհետէ միաբանակիցներ ժողովելով, Մաշտոց տաս տարի շարունակ ճգնութեամբ և ուսուցմամբ է պարապել, այնպէս որ նրա աշակերտ Յովհաննէս կաթուղիկոսի ասելով «փայլատակեալ պայծառանայր... որ զփառացն Աստուծոյ անշիջանելի ճառագայթումն յինքն նկարէր, աստուածային ծաւալմամբ և սրբափայլ կրօնիւք կենդանականօք. և հոգիախաղաց տեսութեամբք ի տեսականն անդ զանտեսն տեսանէր. սակս այնորիկ ամենեցուն աչք ի նա հայէին, յաղագս որոհել ճանաչել մարթելոյ նորա զհոգևորացն մասանց ընտրութիւնս ստուգագէտս»։

Ահա սա, Ստեփանոս Օրբելեանի ասելով, «հրաման առնու ի տեսլեան՝ շինել եկեղեցի յանուն Երկոտասան Առաքելոց, և սահմանել միաբանակեացս. յաղագս որոյ և գային առ նա Երկոտասանքն ի վերայ ծովուն, յանուրջս. և նշանէին զտեղի եկեղեցւոյն»։ Այս միևնոյն տեսիլը տեսնում է նաև Աշոտ Ա. Թագաւորի դուստր և Սիւնեաց Գարուն Վասակ իշխանի ամուսին Մարիամը, որ ամուսնու մահից յետ այս միջոցներում ճգնում էր Սևանայ կղզու հանդէպ գտնուած Ցամաքաբերդի կուսանաց անապատում, այս պատճառով էլ «գայ առ սուրբն Մաշտոց և բաղում թախանձանօք ի հաւան ածեալ զնա ձեռն ի գործ արկեալ շինեն զգեղապաճոյճ եկեղեցիսն յանուն սուրբ Առաքելոց և զմիւսն յանուն Տիրուհւոյ Աստուածածնին. և զարդարեալ մեծամեծ սպասուք՝ կանգնեն զնա տուն Աստուծոյ և բնակարան աստուածազգեաց արանց յՑԻԳ թուականին Հայոց» որ է Փրկչական 874 թ.

Վանքը շատ շուտով ապահովուել է նիւթականապէս՝ Մարիամ թագուհու հօր՝ Աշոտ Ա. առատաձեռնութեամբ, որ այցելելով վանքին՝ նուիրում է «փրկական նշանն աստուածընկալ խաչին», և հետևեալ գիւղերը՝ Վարսեր (այժմ Զրուչը), Ցամաքաբերդ, Գոմաձոր, Բերդքն, Ուռեաց տափ, Որսն Կռակրծին (այժմ Ծակքար, Ղազախում), ինչպէս և միքանի այգիներ Գառնիում, Երևանում և այլ տեղեր *)։

*) Ստ. Օրբելեան. գլ. ԼԷ։

Այս առատ նուիրաբերութեան շնորհիւ Սևանայ վանքը սկսել է բարգաւաճիլ. աւելացել են միաբանները, շինուել են նորանոր խցեր, յառաջ է գնացել վանական դպրութիւնը, և սրա շնորհիւ բարձրացել է Մաշտոցի հեղինակութիւնը, այնպէս որ՝ Աբաս Սպարապետը՝ ցանկանալով խլել թագաւորական թագը իւր եղբօրորդի Սմբատ Ա-ից, լարուել է նաև Գէորգ կաթուղիկոսի դէմ՝ համարելով նրան Սմբատի կուսակից և առաջարկել է Մաշտոցին օգնել իրեն՝ Գէորգին կաթուղիկոսութիւնից ձգելու՝ խոստանալով նրան կաթուղիկոս ընտրել տալ։ Սակայն Մաշտոց յանդիմանական և խրատական մի թղթով համոզել է նրան յետ կենալ իր չար դիտաւորութիւնից և թողութիւն խնդրել կաթուղիկոսից։ Մի շատ գեղեցիկ մխիթարական թուղթ էլ ուղղել է նա Դուինի 893 թ. սոսկալի երկրաշարժից աղատուածներին։

Այսպէս աճել է հեղինակութիւնը Մաշտոցի, որ «այն չափ տքնութեամբ հեղ էր և լաւակամ, և տեսական զուարթ և առատամիտ և ընտրող յոյժ, և վայելուչ հասակաւ մարմնոյն և մխիթարական բանիւ առ գանեալսն խորհրդով, և զօրաւոր և ահարկու առ հզօրս», այնպէս որ Գէորգ Բ. կաթուղիկոսի մահից յետոյ, 897 թուին նա ընտրուել է կաթուղիկոս։ Սակայն 7 ամսից յետոյ վախճանուել է և թաղուել Գառնիում։ Նրան յաջորդել է նրա աշակերտ Յովհաննէս Զ. Դրասխանակերտցին։ Մաշտոց բարեփոխել է Հայոց եկեղեցու ծիսարանը, որի պատճառով և այդ գիրքը այժմ էլ կոչւում է «Մաշտոց»։

Մի քանի խօսք էլ ասենք Մարիամ տիկնոջ մասին։—Այս բարեպաշտ տիկինը ճգնաւորական կեանք է վարել ինչպէս Ցամաքաբերդի կուսանոցում, այնպէս և՝ իւր կառուցած Սևանի վանքում։ Եւ որովհետև արգելուած է եղել կանանց աղօթել ճգնաւորների հետ միասին, ուստի Առաքելոց եկեղեցու հիւսիսային խորանի ներսի դռան փոխարէն միայն մի փոքրիկ բացուած էին թողել՝ ձայնը հեշտութեամբ անցնելու նպատակով։ Դրսից մի դուռ ընդունել է Մարիամ տիկնոջը խորանի մէջ, որ առանց տեսնելու ճգնաւորներին և կամ նրանցից տեսնուելու, հետևել է ժամասացութեան։

Մի անգամ էլ, երբ Մարիամ տիկինը իւր Սահակ և Վասակ որդիների հետ հալածուելով Ցուսուփ ոստիկանից ապաստանել է այս կղզին, Ցուսուփ լաստեր պատրաստելով յարձակուել է կղզու վրայ։ Մարիամ տիկինը իւր որդիներով կարողացել է փախչել Միափորի գաւառը, (Շամշադին), սակայն Ցուսուփ մտել է կղզին, կողոպտել, և ապա հետապնդել նրանց և հասել։ Սահակ և Վասակ

իշխանները ընդդիմադրել են նրան և նոյն իսկ այնպիսի ջարդ տուել, որ զօրքերը հարկադրուել են փախչել։

Սինեաց այս իշխաններն անցել են Արցախի կողմերը, ուր 911 թուին վախճանուել է Մարիամ տիկինը, որին բերել են Գեղարքունի և թաղել նրա կառուցած Շողագայ վանքում [1]։

Սակայն աւանդութիւնն ասում է՝ թէ Մարիամ տիկինը թաղուած է Սևանայ կղզում, Առաքելոց եկեղեցու վերոյիշեալ հիւսիսային խորանում, ուր գալիս էր աղօթելու։

Այս «անմարտնչելի ամրոցում» ապաստանել է նաև Աշոտ Բ. (Երկաթ) թագաւորը 923 թուին, որից ելնելով տասը նաւակով յարձակուել է Բեշիր ոստիկանի վրայ, և արագ նետաձգութեամբ փախցրել նրա զօրքը [2]։

Մաշտոցին յաջորդող Սևանայ վանքի վանահայրերից յայտնի է Ստեփանոս վանականը։ Սա մասնակցել է այն ժողովին, որ գումարուել է Վահան կաթուղիկոսին ընդդիմադրելու՝ նրա քաղքեդոնիկներին հաճութեան թուղթ գրելու մտադրութեան համար։ Վահան կաթուղիկոսն ստիպուել է փախչել Վասպուրական՝ Ապուսահ թագաւորի մօտ, իսկ ժողովը Աշոտ Գ. Շահնշահի կամակցութեամբ կաթուղիկոս է ընտրել այս Ստեփանոս վանականին 970 թ. [3], որ միայն 2 տարի կաթուղիկոսութիւն անելուց յետ՝ վախճանուել է։

Սրան յաջորդել է Խաչիկ և ապա դարձեալ Սևանայ վանքի վանահայր Սարգիս Ճգնակեացը, որ նախ Շողագայ վանքի վանահայրն է եղել։ Սարգիս 27 տարի կաթուղիկոսութիւն է արել՝ վարելով միանգամայն այնպիսի կրօնական կեանք, ինչպիսին վարել էր Սևանայ վանքում։ Սրա հրամանով է Ասողիկը գրել իւր Տիեզերական պատմութիւնը։ Սարգիս կաթուղիկոսը 1019 թուին իւր տեղը կաթուղիկոս է ձեռնադրել Պետրոս Գետադարձին, և ինքը առանձնացել Հոռոմոսի վանքում, ուր և վախճանուել է 1021 թուին։

ԺԱ. դարի առաջին կիսին Սևանայ վանքում սկսել է փայլել վանահայր՝ Սարգիս վարդապետ Իմաստասէրը, Գրիգոր Մագիստրոսի արժանաւոր թղթակից և Բագրատունեաց թագաւորութեան բարձման ժամանակ հասած աղէտների ողբողը։ Սրանից յետոյ մինչև 1205 թ. պակասում են տեղեկութիւններ, իսկ այս ժամանակ յիշւում է Սարգիս «Սևանայ միայնակեացը» [4], որ մաս-

[1]) Յովհաննէս կաթուղիկոս.
[2]) Ասողիկ Գլ. Ը.
[3]) Անդ։
[4]) Կիրակոս Գանձակեցի.

նակցել է Զաքարիա սպասալարի առաջարկով հրաւիրուած Լօռու ժողովին Մխիթար Գոշի և ուրիշների հետ։

Հաւանականօրէն այս Սարգիս վանականի ժամանակ, ԺԳ. դարում, երբ Լեզգիները յաճախ յարձակում են գործել Հայաստանի վրայ կողոպտելու նպատակով, Սևանի շրջակայ բնակիչներն էլ ապաստանել են այս կղզում։ Այս միջոցին Լեզգիների մի խումբ խորամանկութեամբ աշխատել է մտնել կղզին և կողոպտել։ Սրանցից երկուսը իբր վաճառականներ համոզել են Սևանի վերակացուին, որ թոյլ տայ կղզում մի առ ժամանակ պահել իրենց 40 արկղների մէջ դարսած ապրանքը՝ մինչև որ երկիրն աւազակներից կը խաղաղի։ Պատժուած աշակերտներից մինը առանձնանալով այս արկղների մօտ՝ լսել է նրանց միջից մարդկային ձայն, և անմիջապէս իմացրել ուսուցչին։ Վանականները բացել են մի արկղ և տեսել նրա մէջ երկու զինուած Լեզգի։ Բանալով դաւադրութիւնը՝ վանականները ժողովրդի աջակցութեամբ գլորել են արկղները լիճը՝ երգելով «Շնորհեա՛ մեզ Տէր» շարականը, կրկնելով մարգարէի խօսքը՝ «Եւ զխորհուրդն՝ զոր խորհէք՝ խափանէ Տէր, զի Աստուած ընդ մեզ է»։ Յետոյ այս շարականը եկեղեցական երգերի կարգն է անցել և մինչև հիմայ էլ երգւում է։ Այժմ էլ աւանդաբար ցոյց է տրւում Առաքելոց եկեղեցու մօտ մի տեղ, ուր թաղուած են այս դաւադիր խմբի առաջնորդ երկու կեղծ վաճառականները [1]։

Սարգիս վանականից յետոյ դարձեալ պատմական տեղեկութիւններ պակասում են ամբողջ չորս հարիւր տարիների վերաբերմամբ։ Միմիայն մի քանի արձանագրութիւնների մէջ յիշւում են մի-երկու վանահայրերի անուն, ինչպէս Առաքելոց եկեղեցու հարաւային դռան վրայ՝ Դանիէլ վարդապետ և Ներսէս եպիսկոպոս (1522—1557)։

ԺԷ. դարու սկզբին, Ջալալցիների ասպատակութիւնների պատճառով, շատ վանքերի հետ Սևանայ վանքն էլ ամայի է մնացել, մինչև որ Կարապետ եպիսկոպոսը 1620 թ. վերանորոգել է նրան։ Կարապետ եպիսկոպոսը սկզբում Էջմիածնի միաբան է եղել, յետոյ հալածուելով Մելիքսեղեկ կաթուղիկոսից՝ հեռացել է Սիւնեաց անապատը, Սարգիս եպիսկոպոսի մօտ, որի մահից յետոյ եկել Սևան և վերակազմել այստեղի միաբանութիւնը Սարգսի կազմած կանոնների համեմատ։

Սրանից յետոյ յիշւում է Մխիթար եպիսկոպոսը, որ այս,

---

[1]) Մովսէս Երզնկացի, Ինճինճեան, Մանուէլ վրդ. Կիւմիւշխանեցի։

Դեղարքունիք գաւառի Դալիղարդաշ գիւղի քահանան է եղել։ Սա նեղուելով գիւղի տանուտէր Մելիք Փարսադանից՝ հեռացել է Սևան, և կրօնաւոր դարձել։ Իւր առաքինի վարքի պատճառով Փիլիպպոս կաթուղիկոսից եպիսկոպոս է ձեռնադրուել և վանահայր կարգուել։ Նա վախճանուել է 1662 թ. և ամփոփուել Առաքելոց վանքի գաւթում [1])։

Այս Մխիթար եպիսկոպոսի վանահայրութեան միջոցին Թիֆլիսեցի Չիթախեան Սուլխան, Զալ և Զօրապ եղբայրները նորոգել են Առաքելոց տաճարը 1654 թուին, իսկ յաջորդ միւս Մխիթարի ժամանակ, 1664 թուին, ս. Աստուածածնի տաճարը։ Առաջին Մխիթարի ժամանակ նրա օգնական Բարսեղ վարդապետը 1660 թուի դարնանամտին մի արեղայի, մի սարկաւագի և 3 աշխարհականի հետ լաստի վրայ նստած կամեցել են Սևանայ սառած լճի սառուցները կոտորելով ճանապարհ բաց անել դէպի ափը, սակայն սաստիկ հողմ բարձրանալու պատճառով լաստը շրջուել է և խեղդել բոլորին, բացի սարկաւագից և մի աշխարհականից։

1692 թուին Սևան է եկել Մխիթար Սեբաստացին՝ տասն և վեց տարեկան հասակում, կրօնաւորելու նպատակով։ Այստեղ իւր ցաւոտ աչքերին բժշկութիւն գտնելով ս. Աստուածածնից՝ անցել գնացել և վերջիվերջոյ հիմնել է Վենետիկի Մխիթարեան ուխտը։ Աստուածածնի այն պատկերը, որի առաջ ծնկաչոք աղօթել է Մխիթար՝ աչքերին բժշկութիւն հայցելով՝ 1896 թ. Մկրտիչ Ա. կաթուղիկոսի հրամանով տարուել է ս. Էջմիածին և այժմ պահւում է Հայրիկեան թանգարանում։ Այս պատկերը ներկայացնում է Տիրամօրը նստած դիրքով, տխուր և գթոտ դէմքով. մօտը Յիսուս՝ նստած և խաչափայտը գրկին։ Զարչարանաց միւս գործիքները, և սրանց հետ երեսուն արծաթը ցրուած են նրա առաջ [2])։

Փոխանակ այս պատկերի, Հայր Ալիշանը ի յիշատակ Մխիթարի տեսլեան երկհարիւրակի զետեղել է իւր Սիսականում այդ պատկերի պատճէնը, որը նկարուած է Մխիթար Սեբաստացու Սևան գալուց 100 տարի յետոյ, ինչպէս երևում է նրա վրայի արձանագրութիւնից. յիշատակ է Բիժանի որդի Աւանէսին. ՌՄԾ. թ. (=1801)։ Այս պատկերը այժմ էլ պահւում է Սևանայ վանքում։

Սևանայ վանքի վանահայրերի յաջորդութեան կարգը Մխիթար Առաջնից յետոյ դարձեալ ընդհատւում է յիշատակութիւններ չունենալու պատճառով մինչև 1740 թուականը, երբ վանահայր է

---

[1]) Զաքարիա սարկաւագ. Ա. ԽԵ.
[2]) Փիլոյեան. Սևանայ վանքը։

հղել Մարտիրոս եպիսկոպոս Զէրքէզեանցը Ծաղկունքի Շահրիզ գիւղից, որ վերանորոգել է ս. Աստուածածնի եկեղեցու օրօրոցաձև տանիքը սրբատաշ քարով, ինչպէս երևում է այդ մասին եղած նոյն եկեղեցու արևմտեան պատի վրայի արձանագրութիւնից։

Սրա յաջորդ Յովհաննէս վարդապետ Նորատուզցու ժամանակ, 1747 թուին, երբ Նադր-շահի սպանութիւնից յետոյ նրա զօրքերը զանազան խմբերով ցրուել էին Հայաստանի զանազան կողմերը ասպատակելու, մօտ տասն հազարից բաղկացած մի խումբ էլ Ազատ խանի առաջնորդութեամբ մտել է Սիւնեաց աշխարհը՝ կողոպտելու։ Այս միջոցներին Գեղարքունիքի բնակիչները իրենց Մելիք-Սարգիսճան և Ալլահվերդի Իւզբաշի երևելիներով ապաստանել են Սևան կղզում։ Ասպատակողները գիւղերում բնակիչներ չգտնելով մօտեցել են Սևանին յունուարի 5-ին, երբ լիճը սառած լինելով կարելի էր վերայից անցնել։ Հայերը նկատելով ասպատակողներին, կամեցել են հակառակ կողմից փախչել, սակայն Յովհաննէս վարդապետը՝ որ այդ ճրագալուցի երեկոյին պատարագելիս է եղել, ձեռքն է առել Կոթայ ս. Նշանը և պատուիրել ժողովրդին հանդարտուել և աղօթել. ապա շտապով հաղորդել է բոլորին՝ պատրաստելով կռուի և մահուան։ Այս ժամանակ ասպատակողները փողեր հնչեցնելով դէպի կղզին են արշաւել, և մինչդեռ զէնք ունեցողներն առաջ են վազել, կանանց ու երեխաների լացն ու աղաղակը երկինք է բարձրացել, և յանկարծ սառուցը կոտրատուել է և ամբողջ ասպատակող խումբը լիճը խորասուզուել, անհետացել։

Այս Յովհաննէս վարդապետի վանահայրութեան ժամանակ, 1748 թուին, Երևանի խանի հրամանով Ղազար կաթուղիկոսն աքսորուել է Սևան և նրա փոխարէն կաթուղիկոս է ձեռնադրուել Այնթապցի Գիւթար անուանուած Պետրոս եպիսկոպոսը։ Սակայն յետոյ Ղազար կաթուղիկոսը իւր բարեկամների միջնորդութեամբ աքսորից ազատուել է և վերոյիշեալ Պետրոսին աքսորել Զահուկ, ուր և մեռել է [1])։

Յովհաննէս վարդապետից յետոյ 1753 թուին վանահայր է դառել Սամուէլ վարդապետը, որ կարճ միջոցից յետոյ հրաժարուել է և նրա փոխարէն Սիմէօն կաթուղիկոսի կոնդակով վանահայր է կարգուել Յովհաննէս վարդապետը, մի «ցոփաբարոյ և արբշիռ» մարդ։ Սրա ժամանակ Սիմէօն կաթողիկոսը կամեցել է այցելել Սևանայ կղզին։ Յովհաննէս վարդապետը տեսնելով, որ հնագոյն

[1]) Զամչեան պատմ. Հայոց Գ. եր. 840.

մատեաններն անխնամ պահուելով փչացել են, որի համար գրաստէր կաթուղիկոսից նախատուելու է, բոլոր անկազմ եղած հին գրքերը, տետրակները և յիշատակարանները հաւաքել է տուել և գիշերը լիճը ածել [1]։

Յովհաննէս վարդապետին յաջորդել են միքանի վարդապետներ և եպիսկոպոսներ, որոնց գործունէութեան մասին ոչինչ յայտնի չէ։

Այսպէս 1771 թ. Աթանաս վարդապետ Մակուեցի, 5 տարի։

Ազարիա եպիսկոպոս Գանձակեցի, միքանի ամիս։

Եղիազար եպիսկոպոս Գանձասարեցի, երեք տարի։

Գրիգոր վարդապետ Գանձակեցի, որ ութ տարի բարեկարգ վիճակի մէջ է պահել վանքը։ Սա Ցամաքաբերդում գերի է ընկել լեզգիների ձեռքը և տարուել Ղզլար՝ ուր տեղացի հայերի ձեռքով ազատուել է և ինքը երաշխաւորելով ազատել իւր հետ գերի ընկած մի քանի ընկերներին։ Ապա Աստրախանի ու Ղզլարի կողմերում ժողովարարութիւն է արել, որ ազատուի երաշխաւորութիւնից և չորս տարուայ այսպիսի աստանդական կեանքից յետոյ վախճանուել է Ղզլար քաղաքում 1805 թ.։

1807 թ. վանահայր է կարգուել Սարգիս վարդապետ Ոսկանապատցին, որ Թիֆլիսում ժողովարարութիւն անելով, փոքր ինչ բարեկարգել է վանքի դրութիւնը։

Սրա ժամանակ վանքում նշանաւոր են եղել Ռափայէլ Գանձակեցին, որ կրօնաւորների վարժապետ է եղել, Մակար վարդապետ Շամշատինեցին, լաւ սաղմոսերգու, որ սառած լճի վրայով Ցամաքաբերդ գնալիս՝ խորասուզուել է լճի մէջ, և Մխիթար վարդապետ Շամքորեցին, որ բաւականաչափ գրքեր է հաւաքել վանքում և ընտիր մատեաններից օրինակել տուել։

Սարգսի ժամանակ վանքի միաբաններն եղել են 7 վարդապետ, 7 սարկաւագ, 3 դպիր և 4 մահտեսի։

1813 թուին վանքին այցելել է Մորիէ Անգղիացին, Պարսկաստանի դեսպանի ընկերը, որ իւր ուղեգրութեան մէջ տուել է նաև կղզու պատկերը։

Մի քանի տարիներից յետոյ եկել է նրա հայրենակից Քէր-Բորտերը, որ զանազան տեղեկութիւններ է տուել Սևանայ լճի մասին։

1825 թ. վանքը այցելել է Զաքարիա վարդապետ (ապա ե-

---

[1]) Քսաներորդ դարումն էլ Տաթևի վանահայրը քարացած ձեռագիրները կրակն է ածել վանքը մաքրելիս։

պիսկոպոս և Երևանի առաջնորդ) Գուլասպեան Բէհրութեանց Տփխիսեցին, որ գրել է Սևանայ համառօտ պատմութիւնը «Վէպ ծովակին Գեղամայ» խորագրով։

Յաջորդ 1826 թուին վանքը այցելել է Այխվալտ երկրաբան գերմանացին։

Սարգիս վարդապետը 19 տարի վանահայրութիւն անելուց յետոյ հրաժարուել է 1828 թ. և միաբանութիւնը նրա փոխարէն ընտրել է Յովհաննէս վարդապետ Տէր-Մարտիրոսեանցին, որ Ղազախու գաւառի Հաչաջուր գիւղից է եղել։ Սրա խնդրով Էջմիածնի Սինոդի անդամ Մանուէլ վարդապետ Կիւմիւշխանեցին գրել է «Պատմութիւն անցից անցելոց Սէվանայ վանուց» աշխատութիւնը, քաղելով տեղեկութիւններ ինչպէս գրաւոր, այնպէս և բանաւոր աղբիւրներից և հասցնելով վանքի պատմութիւնը մինչև իւր օրերը, 1830 թուականը։

Յովհաննէս վարդապետը վերանորոգել է ս. Աստուածածնի եկեղեցու տանիքը, որի ծախքը հայթհայթելու համար Շաքիի կողմերը ժողովարարութեան համար ուղարկուած Բայազէտցի Կարապետ վարդապետն աւազակներից սպանուել է իւր ծառայի հետ, ինչպէս վկայում է Աստուածածին եկեղեցու արևմտեան դռան աջ կողմում գտնուած արձանագրութիւնը։

Յովհաննէս վարդապետը շինել է նաև նոր խցեր, նորոգել է ս. Աստուածածին եկեղեցու գաւիթը, և մառանները Լմեցի Ստեփանոս վարդապետի ծախքով։

Այսքան շինութիւններ անելուց յետոյ Յովհաննէս վարդապետը հրաժարուել է առաջնորդութիւնից, գնացել Երուսաղէմ և վերադարձին Աղէքսանդրապօլում հիւանդացել և մեռել 1840 թ.։

Սրա առաջնորդութեան միջոցին, այն է երեսնական թուականներին, վանքի միաբանները եղել են 22 հոգի, որոնցից 10 վարդապետ, 2 սարկաւագ և 10 մահտեսի։

Այս միջոցներին, 1836 թուին, հայոց եկեղեցին ընդունել է Ռուսաց կառավարութիւնից Պոլոժէնիան, որ փոփոխութիւն է ձգել նաև Սևանայ վանքում։ Մինչև այս՝ Գեղարքունիքի 24 գիւղերը կազմում էին Սևանայ թեմը, և Սևանայ վանքի վանահայրը միաժամանակ և՛ առաջնորդ է եղել այդ թեմի. սակայն Պոլոժենիայի զօրութեամբ Սևանայ թեմը միացել է Երևանի թեմին, և Սևանայ վանքը ընկել է Երևանի կոնսիստորիայի իրաւասութեան տակ, պարտաւորուելով տարեկան ելևմտի հաշիւ ներկայացնել նոյն ատեանին, վերապահելով իրեն միայն այն արտօնէութիւնը, որ երբ մուտքը ծախսից աւելանայ՝ Ցնայ վանքի սեպհականու-

թիւն, իսկ եթէ պակասի՝ հոգևոր ատեանը մի որևէ կարգադրութիւն անէ լրացնելու [1]։

Այսպէս ուրեմն՝ Սևանայ վանահայրերը զրկուել են առաջնորդական թեմից ու տիտղոսից և մնացել լոկ վանահայրեր՝ ընտրուելով միաբանութիւնից և հաստատուելով հոգևոր բարձրագոյն իշխանութիւնից։

Յովհաննէս վարդապետ վերջին առաջնորդից յետոյ առաջին վանահայր կարգուել է Մինաս վարդապետը, 1840 թուին, որ հաղիւ մի տարի պաշտօն է վարել. նրան յաջորդել է 1841 թուին Յարութիւն եպիսկոպոս Դանձակեցին, իսկ մի քանի ամսից յետոյ՝ Յովհաննէս վարդապետ Անտոնեան Տփխիսեցին, որի ժամանակ Սևան է եկել Յովհաննէս եպիսկոպոս Շահխաթունեան։ Սա գլխաւորապէս օգտուելով Զաքարիա վարդապետ Բէհրութեանցի տետրակից՝ բաւական մանրամասն տեղեկութիւններ է զետեղել Սևանի մասին «Ստորագրութիւն կաթուղիկոսէ ս. Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ» աշխատութեան մէջ։

Յովհաննէս վարդապետը շուտով տեղափոխուել է Կարմիր վանքը։

Սրան 1848 թ. յաջորդել է Մկրտիչ վարդապետը, որին երեխայ ժամանակ Շիրակից փախցրել էին Պարսիկ աւազակները և Երևանում ծախել վերոյիշեալ Յովհաննէս վարդապետին, որ բերել էր Սևան, կրթել և վարդապետ ձեռնադրել։ Սրա վանահայրութեան ժամանակ մի հայ գաւառապետ իւր ընտանիքով ցանկացել է այցելել Սևանայ վանքը, սակայն միաբանութիւնը թոյլ չի տուել, որովհետև բացի Մարիամ տիկնոջից և արշաւանքների ժամանակ Սևան ապաստանող ամբողջ ազգաբնակութեան հետ եկած կանանցից, ոչ մի կին իրաւունք չէ ունեցել այս ճգնութեան վայրը մտնելու։ Հայ գաւառապետը վիրաւորուած դիմել է Ներսէս Ե. կաթուղիկոսին և նրանից թոյլտուութիւն ստանալով՝ եկել։ Միաբանները սաստիկ վրդովուել են, և նոյն իսկ Սարգիս վարդապետը, որ կին չտեսնելու նպատակով միշտ խուսափել է դիւղ մտնելու և այս պատճառով էլ «Գիեանդա-գիրմազ» (Գիւղ-չմտնող) կոչուել, հրացան առած դուրս է եկել արգելելու, սակայն իզուր, գաւառապետը իր կնոջ հետ մտել է կղզին և այսպիսով՝ Ներսէս կաթուղիկոսի կոնդակի համեմատ՝ այս արգելքը վերացել է։

Այս Մկրտիչ վանահօր ժամանակ 1856 թ. Ներսէս Ե. կաթուղիկոսը հաստատել է Սևանում ևս վանական կառավարութիւն՝

---

[1]) Սարգիս հպիսկ. Սևանայ վանքը. Հովիւ 1906 թ. № 42.

Յարութիւն, Կարապետ և Յովսէփ վարդապետներից՝ վանահօր նախագահութեամբ և Գեղարքունի գաւառի «հոգևոր գործոց տեսչի» (Բարսեղ աղա Արծրունու) վերահսկողութեամբ [1]) սակայն այս բարեկարգութիւնը տևել է միայն մինչև Ներսէս Ե. մահը։

Մկրտիչ վարդապետը 10 տարի վանահայրութիւն անելուց յետոյ վախճանուել է 1858 թ. և նրան յաջորդել է Կարապետ վարդապետը, Ղազախի Քարվանսարա գիւղից։ Նա աւելացրել է ուխտաւորների սենեակները Բարսեղ աղա Արծրունու ձեռնտուութեամբ։ Վերջինս իւր ծախքով շինել է նաև երկու սենեակ՝ բարձրաստիճան հիւրերի համար։

Երեք տարուց յետոյ Կարապետ վարդապետը հրաժարուել է պաշտօնից և 1861 թ. նրա փոխարէն վանահայր է կարգուել Յարութիւն վարդապետ Մառջանեան Շիրակեցին։ Սա շինել է վանքի մառանը, և ցամաքաբերդում նորոգել «դրսի տներ» կոչուած հիւրատունը և շտեմարանը. միևնոյն ժամանակ կղզու մէջ տնկել է ուռենիներ և բարդիներ, ու պարտէզներ շինել։

Մառջանեանի օրով թէյ գործածելու սովորութիւնը մտել է վանքը։ Նախ միայն ուտիս օրերին են թէյ խմել, յետոյ ամէն օր։ Այս թէյի և այլ մանր ծախսերի համար կարգադրուել է «ժամոց» բաժանել միաբաններին.—տարեկան 36 ր. վարդապետներին, 15 ր. սարկաւագներին, 9 ր. դպիրներին և 6 ր. մահտեսիներին [2])։

Մառջանեանի օրով, 1862 թ. մեռել է Մելքոն ճգնաւոր Տփխիսեցին, որ 40 տարի շարունակ խիստ ճգնաւորական կեանք էր վարել այս կղզում, բացել էր ս. Յարութեան եկեղեցու հիմնապատերը և շինել բաւականաչափ խցեր։

Յարութիւն վարդապետը 9 տարի վանահայրութիւն անելուց յետոյ հրաժարուել է պաշտօնից, գնացել Երուսաղէմ, և ապա կրկին վերադարձել Սևան, ուր յոդացաւից տառապել մինչև 1896 թ. երբ մեռաւ և թաղուեց ս. Աստուածածնի եկեղեցու մօտ՝ վանահայրերի հանգստարանում։

Յարութիւն վարդապետի հրաժարուելուց յետոյ կրկին վանահայր է կարգուել Կարապետ վարդապետ Բիւլբիւլեանը 1869 թուին։ Սա ևս գլխաւորապէս զբաղուել է շինութիւններով. նախ ծածկել է ս. Աստուածածնի տանիքը երկաթէ թիթեղով, ապա աւելացրել է ուխտաւորների սենեակները, Ելենովկա գիւղի մօտ

---

[1]) Կոնդակներ Ներսէս կաթուղիկոսի 1856 թ. սեպտ. № 157 և 305։

[2]) Սարգիս եպիսկոպոս. Սևանայ վանքը. Հովիւ 1906 թ. № 48.

շինել է երկու կարաւանատուն, Զանգի գետի վրայ նոր սիստեմի երկու ջրաղաց. մի տուն է դնել Երևանում և մի ջրաղաց Նոր-Բայազէտում և վանքի վրայ հաստատել տուել Ելենովկայի մօտ նոր բացուած թերակղզին։

1871 թուին, ամառը, Գէորգ Դ. կաթուղիկոսը այցելելով Սևան կղզին, շատ հաւանել է և որոշել բլրի գագաթին հայրապետական ամարանոց կառուցանել, սակայն բժիշկների խորհրդով փոխել է որոշումը, որովհետև լճի խոնաւութիւնը կարող է վատ ազդել։

Տեսնելով միաբանութեան սաստիկ տգիտութիւնը, Գէորգ Դ. կաթուղիկոսը վերադարձին Էջմիածնից ուսուցիչներ է ուղարկել՝ ուսուցանելու միաբաններին. նախ եկել է Յովակիմ սարկաւագը, ապա եղիա վարդապետ Զալալեանը, որին յաջորդել է Յովակիմ վարդապետ Ղամէքեանը։ Այս գեղեցիկ գործը տևել է մինչև 1880 թուականը։

Բիւլբիւլեանի երկարատև վանահայրութեան միջոցին 1890 թուին Իտալիայի թագաժառանգ (այժմ թագաւոր) Վիկտոր Էմմանուէլը այցելեց Սևանայ վանքին ևս, հիանալով լճի աքանչելի տեսքից։

1892 թուին Բիւլբիւլեան վանահայրը 25 տարի վանահայրութիւն անելուց յետոյ վախճանուեց և նրան յաջորդեց Գալուստ վարդապետը, որ միայն 7 ամիս պաշտօն վարելուց յետոյ հրաժարուեց։ Այս ժամանակ Սինոդի հրամանով Սևան եկաւ Սահակ վարդապետ Ամատունին, և միաբանների ընդհանուր հաւանութեամբ վանահայր ընտրեց Գրիգոր վարդապետ Ակուռեցուն, 1892 թ.։ Սա ազգաւ քուրդ էր, Ակուռի կործանման ժամանակ հանդում գտնուելով՝ սարսափած փախել, ազատուել էր, ապա Դարբիչակի Ալափարս գիւղի տանուտէրի մօտ ծառայութեան էր մտել, քրիստոնէութիւն ընդունել, յետոյ եկել Սևան, ուսում առել և 20 տարի վանքին ջերմեռանդութեամբ ծառայելուց յետոյ 1872 թ. վարդապետ ձեռնադրուել։ Սա համոզեց նաև իւր հօրեղբօրը՝ որ քրիստոնէութիւն ընդունէ։

Սահակ Ամատունին Գիւմիւշխանցու պէս վանքի բոլոր կալուածների և իրեղէնների ցուցակը [1]) և ելևմտից նախահաշիւը կազմեց և առաջարկեց Սինոդին հաստատութեան, և սա՝ վաւերացնելով ու ժապաւինելով վերադարձրեց վանքին։ Այս ցուցակով վանքը ունի 112 կտոր ձեռագիր և 541 կտոր տպուած գիրք։

---

[1]) Ձեռագրների ցուցակը, առանց յիշատակարանների, տըպուած է Սմբատեանի Գեղարքունիքում. եր. 128.

Գրիգոր վարդապետը երեք տարի վանահայրութիւն անելուց յետոյ 1895 թ. հրաժարուեց և նրա փոխարէն ընտրուեց Սարգիս վարդապետ, այժմ եպիսկոպոս, Փիլոյեանը։

«Կորած Մարգարիտ» վէպի հեղինակ և նոյն իսկ հերոս հեզահամբոյր և ուսումնասէր ներկայ վանահայրը 1897 թ. Շուշեցի Աւետիք Բալայեան Ղուկասեանի ծախքով շինեց դպրոցական մի գեղեցիկ շէնք, սրբատաշ քարից, թիթեղածածկ, հինգ մեծ սենեակներից բաղկացած։ Նաև Բագուում ժողովարարութիւն անելով կառուցեց միաբանների համար նոր, գեղեցիկ խցեր, 10 սենեակներից և հինգ նախասենեակներից բաղկացած՝ ընդարձակ պատշգամբով, ինչպէս նաև Բուդաղեան եղբայրների ծախսով վանահօր համար բնակարան՝ չորս սենեակներից և մի նախասենեակից բաղկացած։ Բագուեցի Լիւդվիգ Սարգսեանի և վանքիս միաբան հանգուցեալ Սողոմոն սարկաւագի ծախսով էլ կառուցեց ս. Աստուածածնի եկեղեցու սրբատաշ, գեղեցիկ զանգակատունը։ Այժմ էլ շինում է ուխտաւորների համար 15 սենեակներից բաղկացած ընդունարան։

ՍԵՒԱՆԱՑ ՎԱՆՔԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԷՎՈԼԻՒՑԻԱՆ

Գծելով Սևանայ վանքի պատմութիւնը, որքան թոյլ են տալիս նիւթերը, տեսնում ենք, որ սա ունեցել է երեք գլխաւոր շրջան։ Առաջնում (305—874) նա հին մեհեանից փոխուել է վանքի և հաւանականօրէն առանձին հասարակական ոչ մի դեր չէ խաղացել, մանաւանդ որ ոչ մի յիշատակութիւն չկայ։ Երբեմն միայն, այն էլ կղզու շնորհիւ, ժողովրդին իբր ապաստան է ծառայել, որովհետև իւր ժամանակի համեմատ մի «անմատչելի ամրոց» է համարուել։ Այս ծառայութիւնը նա մատուցել է նաև յետագայ երկու շրջաններում։

Երկրորդ շրջանում (874—1836), երբ ճգնաւորութիւնը Հայաստանումն էլ արդէն որոշ զարգացման է հասել, Մաշտոց և նրա նման ճգնաւորներ խմբուել են այս մեկուսացած, մանաւանդ ձմեռն աշխարհից կտրուած վայրը և մոռանալով հասարակական կեանքը՝ ճգնել։ Ահա այս Թ. և Ժ. դարերի ոգու ազդեցութեամբ՝ շինուել են գեղեցիկ եկեղեցիներ, նուիրել ահագին կալուածքներ, կազմակերպուել բաւական մեծ միաբանութիւն, որը տուել է նոյն իսկ կաթողիկոսներ՝ ինչպէս Մաշտոց (897 թ). Ստեփանոս վանական (970), Սարգիս ճգնակեաց (992—1019), որոնք սակայն, նշանաւոր են եղել նոյն իսկ հայրապետական աթոռի վրայ իրենց ճգնաւորական կեանքով՝ և ոչ հասարակական գործունէութեամբ։